ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

26 հոկտեմբերի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

152
(2632)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 120

Այս տարվա ապրիլի 20-ին՝ ժամը 14:19-ին, ՀՀ կառավարությունը լրատվամիջոցներին մի հաղորդագրություն էր ուղարկել, որում ներկայացված էր այն ելույթը, որ նա ունեցել է ՌԴ Պետական դումայի նախագահ Վյաչեսլավ Վոլոդինի հետ հանդիպման ժամանակ: Փաշինյանը նշել էր. «Նախագահ Պուտինի հետ արդյունավետ քննարկում ունեցանք, ընդունեցինք համատեղ կարեւոր հայտարարություն»,-ասել էր Նիկոլ Փաշինյանը՝ հավելելով, որ վերջնական համաձայնության են եկել մի շարք կարեւոր հարցերի շուրջ, այդ թվում՝ կապված անվտանգության, Լեռնային Ղարաբաղի հարցի, տարածաշրջանային ենթակառուցվածքների ապաշրջափակման, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանագծման եւ սահմանազատման գործընթացների շուրջ: Սակայն երբ նրա այս հայտարարության շուրջ աղմուկ բարձրացավ մասնավորապես ադրբեջանցիների կողմից եւ գուցե Կրեմլի կողմից զանգից հետո ՀՀ կառավարության կայքում լուրը խմբագրվել է. նշվել է, թե համաձայնությունը կապված է «Լեռնային Ղարաբաղի անվտանգության» հետ: Պարզվում է, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ ստել է: Փաստորեն, նա ոչ միայն Հայաստանի ներսում ՀՀ քաղաքացիների գլխի տակ փափուկ բարձ դնելու համար է մանիպուլյացիոն հայտարարություններ անում, այլ նաեւ միջազգային հարթակներում է ստում եւ մեր երկրի ազգային անվտանգությանը վտանգ ներկայացնում:



Ռուսաստանի քաղաքացիությունից հրաժարված եւ սեպտեմբերին Արցախ տեղափոխված գործարար Ռուբեն Վարդանյանն ընդունել է նախագահ Արայիկ Հարությունյանի առաջարկն ու, իր ասելով, նոյեմբերին կստանձնի պետնախարարի պաշտոնը: Արցախի նախագահը նման առաջարկով դեռ կես ամիս առաջ՝հոկտեմբերի 2-ին էր հանդես եկել, Վարդանյանը, սակայն, իր պատրաստակամության մասին օրերս է հայտարարել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ՝ պատահական չէ, որ գործընթացն այդքան երկար է տեւել: Սովորաբար պաշտոնի նշանակվում, ապա նոր միայն հայտարարում են այդ մասին, այլ ոչ թե «առուն չթռած՝հոպ ասում»: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝նախագահ Հարությունյանը Վարդանյանին ասել է, որ եթե նա կարողանա իրեն լավ դրսեւորել այդ պաշտոնում, ապա լիազորությունների մեծ շրջանակ կվերապահի գործարարին: Հարությունյանի առաջարկից ոգեւորված Վարդանյանը «լիազորությունների լայն շրջանակի» մեջ նաեւ Արցախի կառավարման ֆինանսական մասն է պատկերացրել ու ցանկացել դրա տնօրինմամբ նույնպես զբաղվել: Հարությունյանը, սակայն, դրա հետ չի համաձայնել, ու այդ միջադեպ-խոսակցությունն էլ հենց գործընթացի ձգձգման պատճառ է դարձել: Ի վերջո, նախագահ Հարությունյանն ու գործարար Վարդանյանը միմյանց հետ պայմանավորվելիս ազդեցությունների գոտիներն են բաշխել, որոշվել է «լիզորությունների լայն շրջանակից» հանել բյուջեի տիրապետման գործառույթը եւ ուժայինների կառավարումը, ինչից հետո Արցախ տեղափոխված գործարարին պաշտոնի են նշանակել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մինչդատական վարույթներ քննող դատավոր Արուսյակ Ալեքսանյանի կալանավորումից առաջ իրավապահ համակարգն ուշագրավ գործընթաց է սկսած եղել: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ուժային կառույցները սկսել են ուսումնասիրել դեռ տարիներ առաջ դատարանների կողմից կայացված դատական ակտերը: Առաջին հերթին վերջիններս ուսումնասիրել են բոլոր այն ակտերը, որոնց մասով ունեցել են կասկածներ, թե դատավորն, օրինակ, այս կամ այն քրեական գործով ինչ-ինչ շահագրգռվածություն է ունեցել եւ նման որոշում է կայացրել: Արդյունքում անգամ նախաքննական մարմիններ են հրավիրվում տարիներ առաջ դատարանի կողմից ազատ արձակված անձինք եւ տեղեկացվում, որ նախաքննական մարմինները ստուգում են տարիներ առաջ իրենց մասով հրապարակված դատական ակտերը: Դատելով իրավիճակից՝ուժային կառույցները դատական համակարգի որոշումների մասով կասկածներ ունեն եւ որս են սկսել դատավորների նկատմամբ: Իսկ թե ով կլինի Արուսյակ Ալեքսանյանից հետո, ցույց կտա ժամանակը. հետեւենք զարգացումներին:

«Դայակ պետության հաշվին» ծրագիրը չի գործում. այս տարի մայրիկները չեն կարողացել դիմել ծրագրին, քանի որ այն այս տարվա հունվարի 1-ից դադարեցված է: «Ժողովուրդ» օրաթերթն այս խնդրի շուրջ տեւական ժամանակ է, ինչ ահազանգեր է ստանում երիտասարդ մայրերից: Նրանց մեծ մասը համոզված է, որ նախարարությունը դադարեցրել է ծրագիրը ֆինանսավորում չունենալու պատճառով: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունից հայտարարում են, որ այն վերախմբագրման փուլում է: «Ժողովուրդ» օրաթերթին նախարարությունից հայտնեցին նաեւ, որ դադարեցվել է ոչ միայն «Դայակ պետության հաշվին», այլ նաեւ զվաղվածության պետական աջակցության մի շարք ծրագրեր: «Ունենք գործող ծրագրեր, որոնք մեկնարկել են, բայց կոնկրետ թիրախային խմբերի զբաղվածության ապահովմանն են ուղղված: Օրինակ՝ հիմա ունենք ծրագիր, որը նախատեսված է 2016 եւ 2020 թվականների պատերազմի մասնակիցների համար: Հիմնական շեշտադրումը պատերազմից հետո այդ ուղղությամբ է եղել»,- փոխանցեց սոցապ նախարարի մամուլի խոսնակ Ջառա Մանուչարյանը: Նշենք, որ այս ծրագրից օգտվել են մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող այն քաղաքացիները, որոնք մինչեւ երեխայի երկու տարին լրանալը վերադառնում են աշխատանքի: Այսինքն՝ ձեր երեխային խնամում էր դայակը, իսկ նրա գումարի մի մասը վճարում էր պետությունը:

ՍԱՀՄԱՆ

ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆՆ ԵՆ ՍՊԱՍՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցն է Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Կարեն Սարուխանյանը:

-Սեպտեմբերի 13-ի՝ հակառակորդի կողմից իրականացված էսկալացիայից ավելի քան մեկ ամիս է անցել, ու այս ընթացքում ամենատարբեր կառույցների, միջազգային ընկերությունների ու պետությունների կողմից տարաբնույթ գնահատականներ են տրվել: Ի՞նչ կարող ենք փոխանցել հասարակությանը, իշխանությունն ի՞նչ քայլեր է անում, որ անհաստատ իրավիճակի վերջն ի վերջո երեւա:

-Ինչպես տեղյակ ենք, լարվածություն դեռ կա, բայց Հայաստանի իշխանությունը, մեր դիվանագիտական կորպուսը հնարավոր ամեն բան անում են: Ազգային ժողովի պատգամավորներն իրենց միջազգային գործընկերների հետ են աշխատում, ու, ըստ իս, որոշակի դրական տեղաշարժ գրանցել ենք:

-Օրերս էլ ՀԱՊԿ-ն է հայտարարություն տարածել, որ մեկ ամսից ավելի է, ինչ Ադրբեջանը Հայաստանի սուվերեն տարածքից 127 քառակուսի կմ է օկուպացրել: Այս հայտարարությունից հետո ի՞նչ սպասել:

-ՀԱՊԿ-ին հենց այդ հիմքով էլ դիմել էինք, որ Ադրբեջանը մտել է Հայաստանի սուվերեն տարածք ու օր առաջ պետք է իր զորքերը դուրս հանի, բայց դեռ լուրջ շարժ չենք նկատել: Բայց այն, որ աշխատում ենք այդ ուղղությամբ, փաստ է: Այն օրակարգը՝ «խաղաղության», որ որդեգրել ենք, հենց դրան է միտված, որ Ադրբեջանը դուրս գա ՀՀ տարածքից, նստենք բանակցությունների սեղանի շուրջ ու քննարկենք, գտնենք տարածաշրջանում խաղաղության հասնելու բանաձեւերը, ելքերը: ՀԱՊԿ-ի կողմից կոնկրետ գործողություններ չեն եղել, բայց ինչպես տեղյակ եք, դիտորդներ են գալու, ծանոթանան ստեղծված իրավիճակին, իրենց գնահատականը տան ու կանգնեն սահմանի երկայնքով:

-Եվրոպան ասում է՝ դիտորդներ կուղարկի, որ կանգնեն հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով, Ռուսաստանն էլ Լավրովի շուրթերով խոսում է սահմանին ՀԱՊԿ դիտորդներ տեղակայելու անհրաժեշտության մասին: Այս իրավիճակում ո՞ւմ կողմն է թեքվելու պաշտոնական Երեւանը:

-Հայաստանի ու Ադրբեջանի սահմանին որքան շատ ներկայացուցիչներ լինեն, այնքան մեր երկրին է օգուտ: Նրանք բոլորը կտեսնեն իրական պատկերը, ու միջազգային հանրությունը կտեսնի՝ ինչ է կատարվում: Իմ կարծիքով՝ երկուստեք կարող են սահմանին լինել ու իրավիճակի գնահատականը տալ:

-Իսկ դիտորդներն ինչպե՞ս են կանգնելու սահմանին՝ մինչեւ 2022-ի սեպտեմբերի 13-ին եղած կարգավիճակո՞վ, թե՞ արդեն իսկ առկա վիճակով: Այսինքն՝ ՀՀ տարածքային ամբողջականությունը վերականգնվելու է, ապա նո՞ր են դիտորդներ տեղակայվելու:

-Անկեղծ ասած, նրբություններին տեղյակ չեմ, թե ինչպես ու որտեղ, ինչ եղանակով են տեղակայվելու: Այդ հարցի մանրամասներից ԱԺ պաշտպանության ու անվտագնության հարցերի մշտական հանձնաժողովի անդամ պատգամավորները գուցե տեղյակ լինեն:

-Պարոն Սարուխանյան, ինչքան էլ Դուք ասում եք, որ իշխանության ջանքերի շնորհիվ որոշակի տեղաշարժ կա, ու միջազգային կառույցները սկսել են հասցեական արձագանքել, բայց ընդդիմադիրներն ու հասարակության մի ստվար հատված շարունակում է պնդել, որ հեռանաք իշխանությունից, իրենք գան, բանակցեն:

-Նրանք միայն ասում են՝ իշխանությունը մեզ տվեք, բայց չեն ասում՝ երբ իշխանության գան, ի՞նչ են անելու, ինչպե՞ս են բանակցելու: Ի՞նչ ասել է «ավելի լավ բանակցել». իսկ նրանք ի՞նչ գիտեն, որ այժմ ավելի վատ է բանակցվում, ի՞նչ գիտեք ստեղծված իրավիճակը՝ իր բոլոր նրբություններով: Այսքան ժամանակ ես ընդդիմության կողմից կոնկրետ առաջարկ չեմ լսել: Ընդդիմադիրներին մեկ անգամ չէ, որ հարցրել են՝ ենթադրենք իշխանության եք գալիս, նոյեմբերի 9-ի հայտարարությունը կարո՞ղ եք չեղարկել կամ ո՞ր կետն եք չեղարկելու: Նրանց կողմից հստակ, կոնկերտ առաջարկ չի եղել:

-Ասում են՝ իշխանության կգանք, ապա նոր միայն կխոսենք այս մասին:

-Այսինքն՝ հասկանալի է, չէ՞, որ նրանց ցանկությունը միայն իշխանության գալն է ամեն կերպ ու ամեն գնով: Իսկ գործող իշխանությունը ստեղծված իրավիճակին շատ ավելի լավ է տիրապետում ու բոլոր նրբությունները գիտի, շատ ավելի լավ էլ բանակցում է:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՉՆԵՐԵՑԻՆ

ԻՆՉՈ՞Ւ Է ՀԵՌԱՑԵԼ ՍԱՇԱ ԿԱՏՎԱԼՅԱՆԸ

Երեկ հայտնի դարձավ, որ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Սաշա Կատվալյանն աշխատանքից ազատման մասին դիմում է ներկայացրել Երեւանի քաղաքապետ Հրաչյա Սարգսյանին: Իհարկե, առաջին հայացքից նորմալ կարող է թվալ վարչական շրջանի ղեկավարի՝ աշխատանքից ազատվելը, սակայն իրականում նրա դիմումի նախապատմությունը հին է, եւ վերջինիս իշխանությունները պարզապես չներեցին:

Իսկ ինչի՞ մասին է խոսքը. խոսքը նրա՝ սեպտեմբերի 21-ի գրառման մասին է: Հենց այդ օրն էին ոստիկանները «Եռաբլուր» զինվորական պանթեոնում բռնի ուժով բերման ենթարկել անհետ կորած զինծառայողների ծնողներին: Այդ օրը նա սոցիալական ցանցի իր էջում գրել էր. *««Եռաբլուրում» որեւէ ակցիայի իրականացումը երբեւէ չեմ ընդունել ու չեմ ընդունի: «Եռաբլուրը» քաղաքական խաղերի, կոչերի ու բողոքի վայր չի եղել ու չպիտի լինի: Այսօր ոստիկանական ուժերը գործել են առնվազն ոչ պրոֆեսիոնալ եւ շատ վատ ձեւով բերման են ենթարկել զոհվածների մայրերին: Որպես արցախյան պատերազմում զոհվածի որդի եմ ասում՝ ոստիկանության գործելաոճը սխալ էր ու դատապարտելի: Տղե՛րք, կարմիր գծեր կան, որ չպետք է անցնել»:*

Հենց այս գրառումից հետո նրա հարաբերությունները լարվել են ՔՊ-ականների հետ: Ըստ էության, նրան ճնշելով են հասցրել այս դիմումին: Նրան դատապարտող գրառման համար պարզապես չներեցին:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

2022 թվականի տարվա վերջի դրությամբ պետական պարտքը կկազմի 4 տրլն 490 մլրդ դրամ: Մեկ տարվա ընթացքում աճը կկազմի 60 մլրդ դրամ կամ 1.3%: Այս թվերն առկա են 2023 թվականի պետական բյուջեում: Արդեն 2023 թվականին կանխատեսվում է, որ պետական պարտքը կավելանա եւս 389 մլրդ դրամով կամ 8.7%-ով:

Այսպես, ՀՀ դրամով արտահայտված պետական պարտքը օգոստոսի վերջին կազմել է 4 տրլն 44.5 մլրդ դրամ՝ տարեսկզբի համեմատ նվազելով 385 մլրդ դրամով կամ 8.7%-ով: Արտաքին պարտքը նվազել է 20.3%-ով, իսկ ներքին պարտքն ավելացել է 21.1%-ով:

Չնայած որ պարտքը շարունակել է աճել դոլարային արտահայտությամբ, սակայն կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը նվազել է, քանի որ հաշվարկներն արվում են ՀՀ դրամով: Մյուս կողմից էլ՝ ՀՆԱ-ն ավելի արագ է աճել, քան պետական պարտքը:

ՀՆԱՐԱՎՈՐ ԵՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձերբակալված եւ կալանավորված անձանց պահման վայրերում հնարավոր է կառուցվածքային փոփոխություններ լինեն: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս մասին որոշման նախագիծը ՀՀ ոստիկանությունն է հանրային քննարկման դրել:

Ըստ ոստիկանության՝ ՁՊՎ-ներում հասարակական դիտորդական խմբի եւ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակիցների կողմից իրականացված ստուգայցերի արդյունքում արձանագրվում են մարդու իրավունքների այնպիսի խախտումներ, որոնք ուղղակի կապված են շինարարական առանձնահատկությունների հետ:

Պարզվում է, որ ՁՊՎ-ներում աստիճանների թեքահարթակներ չկան, զուգարաններն առանձնացված չեն լոգարաններից, խցերի պատուհանները փոքր են, ինչի պատճառով խոչընդոտվում է բնական լուսաթափանցելիությունը եւ օդափոխությունը, բուժզննության սենյակները համատեղված են այլ նշանակության սենյակների հետ, տեսակցության սենյակը չի համապատասխանում միջազգային ստանդարտներին՝ չի ապահովվում պահվող անձի եւ տեսակցողի ֆիզիկական շփումը: Բացի այս, զբոսաբակերը չունեն ծածկեր, որոնք կպաշտպանեն արեւի ուղիղ ճառագայթներից ու տեղումներից, խցերում արհեստական լուսավորությունը գիշերային ժամերին թուլացնելու հնարավորություն չունի՝ պահվող անձանց քունը չխանգարվելու համար, հանձնուքների ընդունման համար սենյակներն առանձնացված չեն, հիվանդներին, հղի եւ իրենց մոտ անչափահաս երեխա ունեցող կանանց պահելու համար առանձնացված խցերն ապահովված չեն տաք ջրով: Այս խնդիրները լուծելու նպատակով ոստիկանությունն առաջարկում է առանձին իրավական ակտով սահմանել ձերբակալվածներին պահելու վայրերի շինությանն առչվող առանձնահատկությունները ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի կողմից առաջարկվող միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՏԱՍԽԱՆ

Երեկ «Հայկական ժամանակ»-ը տեղեկություն էր հրապարակել, թե ՌԴ ԱՊՀ գործերի, եվրասիական ինտեգրման եւ հայրենակիցների հետ կապերի հանձնաժողովի նախագահ Կոնստանտին Զատուլինի մուտքը Հայաստանի Հանրապետություն արգելվել է, եւ նա համարվում է անցանկալի անձ Հայաստանում: ArmLur.am-ը այս հարցով զրուցեց հենց Կոնստանտին Զատուլինի հետ, եւ չնայած նա շտապում էր հեռուստաթերի, սակայն տեղեկություն փոխանցեց իր շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

«Նամակը ստացել եմ Հայաստանի Հանրապետության ԱԺ արտաքին կապերի վարչության պետից: Բառացի չեմ կարող հիշել, բայց նշված էր, թե իմ հայտարարությունները վնաս են հասցնում Հայաստանին: Այն ստացել ենք այսօր առավոտյան»,- նշեց Զատուլինը:

Վերջինս ընդգծեց, որ անցյալ շաբաթ իրենք նամակներ են ուղարկել ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին, նրա տեղակալին եւ արտգործնախարար Արարատ Միրզոյանին՝նրանց հրավիրելով մասնակցելու Լազարյան ակումբի նիստին, որը նպատակ ունեին անցկացնել հոկտեմբերի 28-29-ին Երեւանում կլոր սեղանի շուրջ՝ «Հայ-ռուսական հարաբերությունների պատմական անցյալն ու ներկան» թեմայով: Եվ, փաստորեն, ստացվում է, որ նա չի կարող գալ Հայաստան եւ մասնակցել այդ նիստին:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄ Է

Սեպտեմբերի 14-ից սկսած Ադրբեջանը տարբեր խոչընդոտներ է ստեղծում ադրբեջանական վերջին օկուպացիայի գոտում հայ զինվորների դիերի որոնողական աշխատանքների համար. «Թվիթեր»-ում գրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Գործադիրի ղեկավարը Բաքվի պահվածքը անմարդկային եւ անընդունելի է համարել:

Աստանայում հոկտեմբերի 14-ին՝ ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի հերթական նիստի ժամանակ, վարչապետ Նիկոլ Փաշինյանը կրկին հայտարարել էր՝ Ադրբեջանը մինչ այժմ խոչընդոտում է վերջին ագրեսիայի ժամանակ զոհվածների դիերի դուրսբերմանը:

«Իսկ մեր մի քանի տղաների աճյունները շարունակում են գտնվել Հայաստանի սուվերեն տարածքում գտնվող միջդիրքային գոտիներում», - ասել էր գործադիրի ղեկավարը՝ նշելով, որ պայմանավորվածություն կա կազմակերպել դիերի դուրսբերումը մոտ օրերս: «Հուսով եմ, որ այս պայմանավորվածությունը կկատարվի», - ասել էր Փաշինյանը:

Փաշինյանի հայտարարությունից հինգ օր անց Հայաստանի պաշտպանության նախարարությունը հայտարարեց. «Բաքուն մինչեւ այս պահը խոչընդոտում է որոնողական աշխատանքներին»:

Վերջին տվյալներով՝ սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի ագրեսիայի հետեւանքով անհետ կորած է 29 մարդ:

ԱՅՑ ԿԱՆԱԴԱ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎԱՅՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը հայտարարություն է տարածել, որտեղ մասնավորապես ասվում է.

«Նախօրեին հանդիպեցինք Կանադայի ներկայացուցիչների պալատի նախագահ Էնթոնի Ռոտայի հետ: Հանդիպումը կազմակերպել էր Կանադայի պառլամենտական կենտրոնը:

Շատ լավ առիթ էր ոչ միայն խոսելու մեր երկու երկրների խորհրդարանների մասին, այլեւ բարձրաձայնելու Հայաստանին եւ Արցախին պատուհասած վտանգները:

Հանդիպմանը ընդգծեցի, որ՝

- Ադրբեջանը օկուպացրել է Հայաստանի Հանրապետության եւ Արցախի Հանրապետության մի շարք շրջաններ,

- հետեւողականորեն իրականացնում է պատերազմական հանցագործություններ, որոնց համար աշխարհի կողմից արժանանում է ընդամենը անհետեւանք դատապարտումների,

- անպատժելիությունը ծնում է նոր հանցագործություններ, ուստի ամբողջ աշխարհին, այդ թվում՝ Կանադային, խնդրում եմ Ադրբեջանի նկատմամբ սահմանել կոնկրետ պատժամիջոցներ:

Շնորհակալություն հայտնեցի Կանադային՝

- Դաշնային օրենսդիր (2004 թ.) եւ գործադիր իշխանությունների մակարդակներով Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու,

- Արցախի անկախությունը ճանաչելու հարցը խորհրդարանական մակարդակով քաղաքական դիսկուրս մտցնելու,

- 2020թ. պատերազմի ժամանակ՝ հոկտեմբերի 5-ին, դեպի Թուրքիա ռազմական արտադրանքի արտահանման թույլտվությունների կասեցման համար:

Ինչպես գիտենք, կանադական ընկերությունը դադարեցրել է ավիաշարժիչների մատակարարումը Թուրքիային՝ Bayraktar TB2 անօդաչու թռչող սարքերում դուստր ձեռնարկության՝Rotax-ի կողմից արտադրված որոշ ավիաշարժիչների՝ պատերազմի ընթացքում օգտագործման պատճառով:

Կանադայի մեր գործընկերոջը ահազանգեցի, որ մոտ 130 հազար բնակիչ ունեցող Արցախին այս ծանր իրավիճակում մենակ թողնելը լինելու է հանցագործություն. Արցախի ժողովուրդն ունի աշխարհի աջակցության կարիքը, եւ բոլորից ակնկալում ենք Ադրբեջանի նոր ցեղասպանության կանխարգելում:

Քննարկեցինք նաեւ ժողովրդավարության մարտահրավերներին, մարդու իրավունքների պաշտպանությանը, միջխորհրդարանական հարաբերությունների զարգացմանը վերաբերելի մի շարք այլ հարցեր»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՄԵԿՆԵՆ ԲԻՇՔԵԿ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) նախագահ Վահագն Հովակիմյանը եւ ԿԸՀ անդամ Աննա Գրիգորյանը հոկտեմբերի 26-ից 27-ը աշխատանքային այցով կլինեն Բիշքեկում՝ Ղրղզստանի Հանրապետությունում: ԿԸՀ անդամներին հրավիրել է ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի տնօրեն Մատեո Մեքաչին՝ մասնակցելու «Ընտրական առաջարկությունների կատարման լավ պրակտիկան» կլոր սեղանին:

Կլոր սեղանը ընտրական փորձագետներին, դիտորդներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին, ինչպես նաեւ համապատասխան պաշտոնատար անձանց հնարավորություն կընձեռի քննարկել ընտրություններին առնչվող մարտահրավերներն ու առկա լավ փորձը:

ՓԱՍՏԱՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կարիքների գնահատման առաքելությունն այցելել է Ջերմուկ:

Նախքան պաշտպանական դիրքեր բարձրանալը՝ տեղի ունեցած հանդիպման ընթացքում, ներկայացվել է սեպտեմբերի 13-ի ադրբեջանական հարձակումից հետո ստեղծված իրավիճակը, ինչպես նաեւ վտանգները, որոնք առաջացել են ադրբեջանական ագրեսիայից հետո:

Հանդիպմանը հաջորդել է ներկայացված իրավիճակի փաստացի արձանագրումը անմիջապես տեղում:

ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Արդարադատության նախարարի պարտականությունները կատարող Գրիգոր Մինասյանի հրամանով՝ Արտյոմ Սուջյանը նշանակվել է արդարադատության նախարարի խորհրդական:

Արտյոմ Սուջյանը 2022 թվականից զբաղեցնում էր նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող ԱՆ խորհրդականի պաշտոնը:

«ՆՎԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԽԱԽՏԵԼԻՍ

Հանրային դաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները նվերներ ընդունելու սահմանափակումները խախտելու դեպքում կենթարկվեն վարչական պատասխանատվության: Ազգային ժողովում «««Հանրային ծառայության մասին» օրենքում եւ հարակից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» նախագիծն առաջին ընթերցմամբ ներկայացրեց արդարադատության նախարարի տեղակալ Արփինե Սարգսյանը:

Նախարարի տեղակալը նշեց, որ նախագծի ընդունումը միտված է Հայաստանի միջազգային պարտավորությունների կատարմանը եւ նաեւ պրակտիկայում կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում արձանագրված մի քանի խնդիրների լուծմանը:

Ըստ նախագծի՝ առաջարկվում է Հայաստանի վերաբերյալ զեկույցում ԳՐԵԿՈ-ի ներկայացրած հանձնարարականների հիման վրա հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների կողմից նվերներ ստանալու սահմանափակումներ նախատեսող կարգավորումները համախմբել մեկ իրավական ակտում: Առաջարկվում է նվերներ ընդունելու սահմանափակումների խախտման դեպքում կարգապահական պատասխանատվության փոխարեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների համար սահմանել վարչական պատասխանատվություն:

Նաեւ կհստակեցվեն հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների անհամատեղելիության պահանջները, կկատարելագործվեն շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված գործիքները, կընդլայնվի փոխկապակցված անձանց, ինչպես նաեւ հայտարարագիր ներկայացնող անձանց շրջանակը: Նախարարի տեղակալը ներկայացրեց օրենքով «նվեր» հասկացությունը:

«Սույն օրենքի իմաստով՝ «նվեր» հասկացությունը ենթադրում է ցանկացած գույքային առավելություն, որը ողջամտորեն չէր տրամադրվի պաշտոն չզբաղեցնող անձի կամ նրա հետ փոխկապակցված անձի, այդ թվում՝ներված պահանջը, անհատույց կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով պահանջի զիջումը, անհատույց հանձնված կամ ակնհայտ անհամարժեք ցածր գնով վաճառված գույքը, անհատույց կամ անհամարժեք ցածր գնով մատուցված ծառայությունը կամ կատարված աշխատանքը, ինչպես նաեւ արտոնյալ փոխառությունը, դրամական միջոցները (կանխիկ, անկանխիկ կամ որեւէ այլ ձեւով արտահայտված), կրիպտոարժույթը, ուրիշի գույքի անհատույց օգտագործումը կամ այլ գործողություններ, որոնց հետեւանքով անձը ստանում է օգուտ կամ առավելություն»,- ասաց Սարգսյանը:

Փոխնախարարի խոսքով՝ սա չի վերաբերում բոլոր նվերներին, այլ բացառապես վերաբերում է այն նվերներին, որոնք գործունեությամբ պայմանավորված են ստացվում:

Ինչ վերաբերում է «փոխկապակցված անձ» հասկացությանը, նախարարի տեղակալը նշեց, որ սույն օրենքի իմաստով փոխկապակցված անձինք են պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը (այդ թվում՝ որդեգրված), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը), քույրը, եղբայրը, պապը, տատը, թոռը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, մորեղբայրը, քրոջ, եղբոր զավակները, պաշտոն զբաղեցնող անձի մորաքրոջ, հորաքրոջ, հորեղբոր, մորեղբոր զավակները, քրոջ, եղբոր, զավակի ամուսինները, պաշտոն զբաղեցնող անձի հետ ազգակցական եւ ոչ ազգակցական սերտ անձնական հարաբերություններ ունեցող անձինք, այդ թվում՝ համատեղ բնակվող անձինք, փաստացի խնամքի տակ գտնվող անձինք, կնքահայրը, կնքամայրը, հոգեզավակը, ընդհանուր տնտեսական շահ ունեցող անձինք:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ ՄԵՂԱԴՐՅԱԼԸ

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողները, հետեւողականորեն իրականացրած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ, առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքով հետախուզվողի գտնվելու վայրի վերաբերյալ տեղեկություն ստացան: Տեղեկությունը ստուգվեց եւ իրացվեց հոկտեմբերի 24-ին: Քրեական ոստիկանության գլխավոր վարչության եւ Հրազդանի բաժնի ծառայողները մեկնեցին Վանաձոր: Վանաձորի Աբովյան փողոցի հարակից զբոսայգում հայտնաբերեցին ու ձերբակալեցին 20-ամյա մի երիտասարդի:

Հիշեցնենք, որ այս տարվա հուլիսի 10-ին «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենայով «Հրազդան» բժշկական կենտրոն էր տեղափոխվել Ծաղկաձորի բնակիչ, 48-ամյա Վարդան Առաքելյանի դին՝ հրազենային վնասվածքներով: Դեպքի առթիվ Կոտայքի մարզային քննչական վարչությունում նախաձեռնվել էր քրեական վարույթ: Նախաքննության ընթացքում կատարված մեծածավալ վարույթային գործողությունների արդյունքում պարզվել եւ հիմնավորվել էր, որ Վարդան Առաքելյանը մտերիմներից մեկի հետ նրա վարած «Նիվայով» գնացել էր Ծաղկաձորի Մայիսյան փողոց, որտեղ նա եւ 20-ամյա երիտասարդի հայրը վիճել էին, ինչից հետո երիտասարդը ինքնաձիգից կրակոցներ էր արձակել «ՎԱԶ-2121» մակնիշի ավտոմեքենայի ուղղությամբ: Վարդան Առաքելյանը հրազենային վնասվածքներ էր ստացել ու մահացել: Սեպտեմբերին 20-ամյա երիտասարդի նկատմամբ հարուցվել էր հանրային քրեական հետապնդում, եւ հայտարարվել հետախուզում: 20-ամյա երիտասարդը ներկայացվել է վարույթն իրականացնող մարմնին: Նախաքննությունը շարունակվում է:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախույզների՝ շուրջ 10 ամիս տեւած ծավալուն օպերատիվ-հետախուզական եւ որոնողական միջոցառումների արդյունքում հոկտեմբերի 7-ի երեկոյան Արշակունյաց պողոտայում հայտնաբերվել եւ բաժին է ներկայացվել Երեւան քաղաքի բնակիչ, 24-ամյա մի երիտասարդ: Նա 2021 թ. դեկտեմբերի 8-ից հետախուզվում էր ոստիկանության Մաշտոցի բաժնի կողմից:

Հիշեցնենք, որ անցած տարվա դեկտեմբերի 7-ին Երեւան քաղաքի վարչության եւ Մաշտոցի բաժնի քրեական հետախույզները համատեղ ծառայության ժամանակ Հրազդանի կիրճում ստուգել էին «Օպել» մակնիշի մի մեքենա: Նկատելով ոստիկաններին՝ ուղեւորը մեքենայից փախել էր՝ նետելով իր մոտ ապօրինի պահվող «ՏՏ» տեսակի, առանց գործարանային համարի ատրճանակը, որը լիցքավորված էր 4 փամփուշտով: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում իրավապահները պարզել էին երիտասարդի ինքնությունը. Սարի թաղի բնակիչ էր: Փաստի առթիվ Աջափնյակ եւ Դավիթաշեն վարչական շրջանների քննչական բաժնում հարուցվել էր քրեական գործ, հայտարարվել էր հետախուզում: 24-ամյա երիտասարդը հայտնաբերվելուց հետո կալանավորվել ու տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ: Նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ԽՈՒԶԱՐԿՈՒՄՆԵՐ

ArmLur.am-ը ներկայացնում է, թե 2022 թվականի 6 ամիսների ընթացքում մինչդատավարական վարույթում դատարանները նախաքննական մարմնի կողմից գաղտնալսում իրականացնելու թույլտվություն ստանալու քանի միջնորդություն են ստացել, այդ միջնորդություններից քանիսն են բավարարվել եւ քանիսը՝ մերժվել:

Եվ այսպես, հեռախոսների մուտքային եւ ելքային վերծանման թույլտվություն ստանալու միջնորդությունները եղել են 4406-ը, նշված միջնորդություններից բավարարվել է 3787-ը:

Խուզարկություն կատարելու մասին ստացվել է 3658 միջնորդություն, որից բավարարվել է 2615-ը, ասել է թե՝ հանրապետությունում 2615 քաղաքացու բնակարան է խուզարկվել:

Կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին ստացվել է 1094 միջնորդություն, որից բավարարվել է 817-ը: Նամակագրության հեռագրական փոստային հաղորդումների հսկողության մասին միջնորդությունները եղել են 845-ը, որից բավարարվել է 684-ը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՊՕՐԻՆԻ ԾԱՌԱՀԱՏՈՒՄ

Ոստիկանության Գուգարքի բաժնի ծառայողները, օպերատիվ տվյալներն իրացնելով, հոկտեմբերի 24-ին Եղեգնուտ գյուղում ստուգման են ենթարկել կայանված «ԳԱԶ-52» մակնիշի, առանց հաշվառման համարանիշի ավտոմեքենան. տեղեկացնում են ՀՀ ոստիկանությունից: Այն բեռնված էր մոտ 3,5 խմ փայտանյութով: Վարորդը փայտանյութի վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ չի ներկայացրել:

Հայտնել է, որ Եղեգնուտ գյուղի հարակից տարածքից բենզասղոցի գործադրմամբ հատել է մոտ 15 կանգուն ծառ: 27-ամյա վարորդը ներկայացվել է ոստիկանության Գուգարքի բաժին, իսկ ավտոմեքենան տեղափոխվել է բաժնի հատուկ պահպանվող տարածք:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Լոռու մարզի քննչական վարչություն:

ԿԱՆԵՓ ԵՆ ԱՃԵՑՐԵԼ

Ոստիկանության Չարբախի բաժանմունքի ծառայողները հոկտեմբերի 19-ին ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Ներքին Չարբախի 7-րդ փողոցի տներից մեկի բնակիչը բակում աճեցնում է թմրանյութ պարունակող եւ մշակումն արգելված բույսեր, այլ կերպ ասած՝ կանեփ: Տեղեկությունը ստուգվեց ու հաստատվեց:

Նախաձեռնվեց քրեական վարույթ: Հոկտեմբերի 21-ին իրավապահներն այցելեցին հիշյալ տուն: Քննությամբ տան բակում հայտնաբերվեց կանեփի 23 թուփ: Բացի այդ, տանտերը ներկայացրեց ընդհանուր 1650 գրամ քաշով դեղնականաչավուն զանգվածներ: Նշանակվել է փորձաքննություն: Նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 24-ից 25-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 53 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ԼՈՒՐԵՐ

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Արմավիրի մարզային կենտրոնի տեսուչների վերահսկողության արդյունքում կասեցվել է անհատ ձեռնարկատեր Հասմիկ Սանթուրյանին (Արմավիրի մարզ, քաղաք Էջմիածին) պատկանող մսամթերքի (քյուֆթա) արտադրամասի գործունեությունը: Ստուգման արդյունքում պարզվել է, որ խախտվել են «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները, մասնավորապես՝

- արտադրական, կենցաղային, օժանդակ սենքերի պատերը պատրաստված չեն եղել հեշտությամբ մաքրվող եւ ախտահանվող, անջրաթափանց նյութերից, առկա է եղել բորբոս,
- առաստաղը կառուցված չի եղել այնպես, որ կանխարգելվի կամ նվազեցվի կեղտի կուտակումը, գոլորշու խտացումը, անցանկալի բորբոսների աճը,
- արտադրական գործընթացում օգտագործվող սարքավորումները, գործիքները եւ պարագաները չեն պահվել բարվոք վիճակում, սեղանների աշխատանքային մակերեւույթները մաքուր չեն եղել,
- աշխատակիցները ենթարկված չեն եղել պարտադիր նախնական եւ պարբերական բժշկական զննություններ, չեն ունեցել սանիտարական գրքույկներ:

Սահմանվել է ժամկետ խախտումներն ու թերացումները վերացնելու համար:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԱՃ

Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022 թվականի հունվար-սեպտեմբերին 14.1 տոկոսով ավելացել է՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Այս մասին փաստում են ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալները:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը այս տարվա հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 10 տոկոսով, իսկ գյուղատնտեսական համախառն ներքին արտադրանքի ծավալը 9 ամսում նվազել է 0.7 տոկոսով:

Շինարարության ծավալը 2022-ի հունվար-սեպտեմբերին ավելացել է 14.3 տոկոսով:

Առեւտրի շրջանառությունում 2022-ի 9 ամսում 2021-ի նույն ժամանակահատվածի նկատմամբ ավելացումը կազմել է 14.5 տոկոս: Հայաստանում այս տարվա հունվար-սեպտեմբերին մատուցված ծառայությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ավելացել է 27.1 տոկոսով:

2022 թվականի հունվար-սեպտեմբերին սպառողական գների ինդեքսը, 2021-ի հունվար-սեպտեմբերի համեմատ, ավելացել է 8.6 տոկոսով, արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը՝ 4.1 տոկոսով: Էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը 9 ամսում, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, ավելացել է 16.9 տոկոսով:

Արտաքին առեւտրաշրջանառության ծավալներում այս տարի՝ 9 ամսում, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, արձանագրվել է 62.5 տոկոս աճ: 2022 թվականի հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, արտահանումն աճել է 63.8 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 61.6 տոկոսով: Դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ հունվար-սեպտեմբեր ամիսներին կազմել է 448.37 դրամ:

ՄԱՐԶ

ՄԱՐԶՊԵՏԸ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆԵԼ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հոկտեմբերի 14-ին «Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցում էր արել այն մասին, թե ինքը տեղյակ է արդյոք, որ Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոցի տնօրեն Լուսինե Հովհաննիսյանը դպրոցի կենսաթոշակառու ուսուցիչներին աշխատանքից ազատելու ժամանակ խախտել է նրանց հետ կնքած աշխատանքային պայմանագրերում նշված ժամկետները, 2021-2022 ուսումնական տարում այդ դպրոցում անօրինական կերպով գործել է բուֆետ, Նոյեմբերյանի թիվ 2 դպրոցի 9-րդ 2 դասարանների աշակերտների ծնողներից ավարտական հանդեսի կազմակերպման նպատակով դրամահավաք է կատարվել, Բերդ խոշորացված համայնքի Պառավաքարի միջնակարգ դպրոցի տնօրեն Նախրա Ղայթմազյանի հրահանգով 2022թ. սեպտեմբերի 1-ից՝ ամեն օր՝ առավոտ ժամը 9-ից, դպրոցի դռները փակվում են, ուշացած աշակերտներին ներս չեն թողնում: Մարզպետն իր գրավոր պատասխանում նշել է, որ Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական եւ Պառավաքարի միջնակարգ դպրոցների վերաբերյալ առաջադրված հարցերն ուսումնասիրվել են մարզպետարանի համապատասխան մասնագետների կողմից, եւ հավելել է. «Տեղեկացնում եմ, որ «Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 30.06.2022թ. ազատված ուսուցիչները թվով հինգն են:

Ուսուցիչներից երկուսն ազատվել են իրենց դիմումի համաձայն, երեքը՝ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալու հիմքով: Դպրոցում անօրինական բուֆետ չի գործել: Նոյեմբերյանի համայնքապետարանը դպրոցի ավարտական միջոցառումը կազմակերպելու համար դպրոցին է հատկացրել 60000 դրամ: Տնօրենը հանդիպել է ծնողխորհրդի նախագահների հետ եւ ներկայացրել գումարը: «Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում դասարանական ծնողական խորհուրդները իրենց նախաձեռնությամբ ավարտական միջոցառում կազմակերպելու համար իրականացրել են դրամահավաք: Ծնողական խորհուրդների նախագահներն իրենց դասարանական ծնողական խորհուրդների առաջարկությամբ եւ բանավոր համաձայնությամբ ավարտական միջոցառում կազմակերպելու նպատակով առաջարկել են միջոցառումը պատշաճ ձեւով անցկացնելու համար լարել դպրոցի դաշնամուրը, գնել միկրոֆոն եւ միկրոֆոնի տակդիրներ, որը հետագայում նույնպես կօգտագործվեն դպրոցում այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով: Ծնողխորհուրդների նախագահների առաջարկությունը հաշվի է առնվել: «Պառավաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում առավոտյան ժամը 9:00-ին ժամանակավորապես փակվել է մուտքի դուռը մինչեւ 1-ին դասաժամի ավարտը, չի թույլատրվել աշակերտների մուտքը դպրոց: Որոշումը կայացվել է մանկավարժական եւ ծնողական խորհուրդների նիստերում աշակերտների ուշացումները կանխելու եւ կարգապահությունը բարձրացնելու նպատակով»: Տավուշի մարզպետը, մեղմ ասած, ապատեղեկատվություն է հայտնել. Նոյեմբերյանի թիվ 2 դպրոցի կենսաթոշակառու ուսուցիչներին աշխատանից ազատելիս դպրոցի տնօրենը նրանցից առնվազն 2-ի դեպքում խախտել է ուսուցիչների հետ կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետները՝ նրանց ազատելով պայմանագրում նշված ժամկետները լրանալուց առաջ: 2021-2022 ուսումնական տարում Նոյեմբերյանի թիվ 2 դպրոցում անօրինական կերպով գործել է բուֆետ, որի բուֆետապանը եղել է այդ դպրոցի դռնապան կինը: Այդ դպրոցի բոլոր աշխատակիցները, դպրոցի բոլոր աշակերտները, նրանց ծնողները գիտեն, որ անցյալ ուսումնական տարում դպրոցում բուֆետ է գործել, քանզի աշակերտները օգտվել են դրանից, ծնողներն իրենց երեխաներին ամեն օր գումար են տվել բուֆետից օգտվելու համար: Պառավաքարի դպրոցի տնօրեն Ն. Ղայթմազյանը նոր ուսումնական տարվա սկզբից անօրինական կերպով փակել է տվել դպրոցի դռները, եւ դրանք փակ են մնացել բոլոր դասաժամերի ժամանակ, ոչ թե միայն առաջին դասաժամի ընթացքում, ինչպես նշել է մարզպետ Ղալումյանը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ո՛Չ ԱՌԱՔՈՒՄՆ Է ԿԱՏԱՐՎԵԼ, Ո՛Չ ԳՈՒՄԱՐՆ Է ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ

«Վայլդբերրիզ» ընկերությունը հայտնվել է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի տեսադաշտում:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հանձնաժողովը հոկտեմբերի 4-ին որոշել է «Վայլդբերրիզ» ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ հարուցել վարույթ:

Պարզվում է՝ ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողով է դիմել քաղաքացի եւ հաղորդում ներկայացրել: Նա հայտնել է, որ այս տարվա հուլիսի 4-ին եւ 7-ին գնում է կատարել «am.wildberries.ru» կայքից, որի համար իր բանկային քարտից կատարել է համապատասխան վճարում:

Ըստ գործող դրույթների՝ ապրանքը պետք է առաքվեր 7-10 օրում, կամ պետք է գումարը հետ վերադարձվեր, սակայն հաղորդում ներկայացնելու օրվա դրությամբ գնված ապրանքները չեն առաքվել, իսկ գումարը հետ չի վերադարձվել:

Հանձնաժողով դիմած քաղաքացին խնդրել է անբարեխղճության եւ խաբեության համար ընկերության նկատմամբ կիրառել խիստ պատասխանատվության միջոց:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ հանձնաժողովն ընկերությունից պահանջել է ներկայացնել 2022 թվականի հունիսի 1-ից մինչեւ սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում իրականացված առաքումների վերաբերյալ տեղեկատվությունը: Պարզվում է, որ ընկերությունը գրություն չի ստացել եւ պահանջված տեղեկատվությունը չի ներկայացրել:

Ավելին, հանձնաժողովը պարզել է, որ «Wildberries Armenia» ֆեյսբուքյան էջում եղել են առաքման ժամկետների վերաբերյալ սպառողների կողմից դժգոհություններ հայտնելու մի շարք հրապարակումներ եւ մեկնաբանություններ:

Ըստ հանձնաժողովի՝ ընկերության կողմից «am.wildberries.ru» կայքում պատվերների առաքման որոշակի ժամկետ հայտարարելն այն դեպքում, երբ դրանք գործնականում առաքվում են ավելի երկար ժամկետներում, առերեւույթ պարունակում է հասարկության մոլորեցման դրսեւորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներ: Թե ինչ կպարզի եւ ինչ որոշում կկայացնի հանձնաժողովը, առաջիկայում պարզ կդառնա:

ՍՅՈՒՆԵ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 12 ճՏՊ. 1 մարդ զոհվել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

22,6 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈՅԻ ՎԱՐԿ՝ ՀՀ-ԻՆ

Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը Հայաստանի Հանրապետությանը 22,6 միլիոն եվրո գումարի չափով լրացուցիչ վարկ կտրամադրի կրթության ոլորտը բարելավելու համար:

Ազգային ժողովի նիստում Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Կրթության բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին նախագիծը ներկայացրեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

Նախարարի տեղակալը նշեց, որ վարկային համաձայնագրի միջոցով նախատեսվում է ընդլայնել «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում եղած ուղղությունները՝ 5 փունջ գործողություններ, որոնք լիովին համահունչ են Հայաստանի Հանրապետության ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրին:

«Առաջին գործողությամբ 4 ավագ դպրոց կհիմնանորոգվի եւ կվերակառուցվի, կհամալարվի անհրաժեշտ գույքով: Խոսքը Երեւանի թիվ 139 ավագ դպրոցին, Աշտարակի, Արտաշատի եւ Վանաձորի ավագ դպրոցների մասին է:

Երկրորդ գործողությամբ, կարիքների գնահատման հիման վրա, 200 հանրակրթական կրթական հաստատություններում նոր լաբորատորիաներ կհիմնվեն: Կառավարության ծրագրով մինչեւ 2026 թվականը հանրապետության բոլոր 1400 դպրոցներում պետք է ստեղծել ժամանակակից բնագիտական եւ ինժեներական լաբորատորիաներ: Նախորդ ծրագրով 107 դպրոցներում այդպիսի լաբորատորիներ ստեղծվել են: Երրորդ գործողությամբ պետք է ստեղծվի 80 նախակրթարան: Նախատեսվում է նախակրթարանների տարածքի վերանորոգում, անհրաժեշտ գույքի եւ սարքավորումների ձեռքբերում, նախակրթարանում ընդգրկված դաստիարակի վերապատրաստում: Նախակրթարանները հարմարեցվելու են ներառական կրթության պահանջներին: Չորրորդ գործողությամբ կնույնականացվեն եւ կփորձարկվեն տվյալների վիզուալիզացիայի գործիքները եւ առանձնահատկությունները: Խոսքը կրթության կառավարման տեղեկատվական համակարգի արդյունավետության բարձրացման մասին է:

Հինգերորդ խումբ գործողությունները ուղղված են բարձրագույն կրթության համակարգին: Նախատեսվում է, որ ԳՏՃՄ (STEM) հինգ ծրագրեր կիրականացվեն, որը կնպաստի բուհերի կրթական գործունեության որակի եւ արդյունավետության բարձրացմանը, կառավարման համակարգի զարգացմանը, մասնագիտական կրթական ծրագրերի ու դասավանդման մեթոդների արդիականացմանը, կրթական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ներդրմանը, ինչպես նաեւ աշխատաշուկայի հետ կապերի զարգացմանը»,- ասաց Մարտիրոսյանը:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՍՏԵՂԾՎԵԼ ԵՆ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

Ճամբարակի «Աստղացոլք» հասարակական կազմակերպությունը երեխաների խնամքի, խոցելի խմբերի, ինչպես նաեւ հաշմանդամություն ունեցող կանանց զբաղվածության ապահովման նպատակով իրականացնում է սոցիալական տարբեր ծրագրեր: Կազմակերպության շահառուները պատրաստում են հայկական տարազով կավե զարգացնող խաղեր, որոնք զարգացնում են երեւակայությունն ու ծանոթացնում հայկական մշակույթին:

«Աստղացոլք» ՀԿ-ի Clay House՝ «Կավե տնակ» սոցիալական ձեռնարկատիրության ծրագիրը Ճամբարակի կանանց ապահովել է աշխատանքով եւ նոր բիզնես ստեղծելու հնարավորություն տվել: Սկզբում ստեղծում էին հուշանվերներ, զարդեր, հետո, ուսումնասիրելով մանկական խաղերի դաշտը, նկատեցին, որ տեղական արտադրության կերամիկական խաղերը շուկայում քիչ են:

Խաղերում օգտագործվում է Ճամբարակի բարձրորակ կավը. հենց կանայք էլ մշակում են այն ու ստանում էկոլոգիապես մաքուր եւ անվտանգ արտադրանք:

Clay house սոցիալական ձեռնարկատիրությունը «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի ամենամյա դրամաշնորհային ծրագրի հաղթողներից է: Տրամադրված դրամաշնորհի միջոցներով ստեղծվել են նոր աշխատատեղեր, եւ խոցելի խմբի կանայք կարողանում են աշխատել եւ շահույթ ստանալ:

«Առաջին հերթին կարեւոր էր, որ տեղական հումքի օգտագործմամբ նոր արտադրատեսակ են շուկային ներկայացնում՝ դրանով իսկ խթանելով նոր աշխատատեղերի ստեղծումը, որտեղ ներառվում են սոցիալապես անապահով խմբերի կանայք: Մենք փորձում ենք ապահովել տվյալ ծրագրի շղթայական գործունեությունը. մի ծրագիրը խթանում է, որ ստեղծվի պրոդուկտ կամ աշխատատեղ, որն էլ աջակցում է, որ տվյալ ծրագրում ընդգրկվեն շատ շահառուներ, իսկ հասույթն էլ ուղղվում է սոցիալական հերթական ծրագրերի իրագործմանը»,- նշում է «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի տնօրեն Աննա Գիշյանը:

«Մեր արտադրամասի գործունեության զարգացումը երկու մաս ունի՝ մինչեւ «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամին դիմելն ու դրանից հետո: Երբ համադրում ենք, թե ինչից ենք սկսել եւ ուր ենք հասել «Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամի շնորհիվ, կարող ենք վստահ փաստել, որ որակապես նոր մակարդակ է ստացվել: Ուրախ ենք, որ մեր հաճախորդներին կարողանում ենք առաջարկել յուրահատուկ պրոդուկտ՝ զարգացնող խաղ, ու կարողանում ենք ոչ միայն մտածել ընթացիկ գործունեության ապահովման մասին, այլեւ զարգացման»,- նշում է Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» ՀԿ նախագահ Իրինա Հովհաննիսյանը:

«Ստեփան Գիշյան» բարեգործական հիմնադրամը ստեղծվել է «Ակբա» բանկի, ֆրանսիական «Կրեդիտ Ագրիկոլ», «Կրեդիտ Ագրիկոլ» ազգային ֆեդերացիայի եւ Գիշյան ընտանիքի կողմից: Հիմնադրամի ծրագրերն ուղղված են հայ-ֆրանսիական կապերի ամրապնդմանը, Հայաստանի սոցիալ-տնտեսական, գիտակրթական, մշակութային, առողջապահական համակարգերի բարելավմանն ու կատարելագործմանը:

ԿՓՈԽԱՐԻՆՎԵՆ 467 ՎԵՐԵԼԱԿ

Բազմաբնակարան շենքերում ավելի քան 40 տարի շահագործվող վերելակները փոխարինվում են: Երեւանի քաղաքապետարանն այս տարի ծրագրում նախնական ներառել էր 426 վերելակ: Շուրջ 300-ն արդեն տեղադրվել է, անցել ԱԻՆ-ի համապատասխան փորձաքննություն եւ շահագործվում է, մյուս մասը տեղադրման եւ կարգավորման փուլում է:

«Քաղաքապետի հանձնարարությամբ, բացի 426 վերելակից, այս տարվա բյուջեում ավելացրել ենք ծրագրի ծավալը մոտ 10 տոկոսով՝ 41 նոր վերելակ: Այդպիսով, այս տարի քաղաքում կունենանք ընդհանուր 467 փոխված վերելակ»,- ասում է Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետ Արսեն Կարոյանը: Ամեն վերելակի տեղադրում մոտ 1 ամիս ժամանակ է խլում մասնագետներից. գործը պետք է արվի հատուկ ճշգրտությամբ: Նոր վերելակները հարմարեցված են նաեւ սահմանափակ կարողություններով անձանց համար. դռների լայնությունը հնարավորություն է տալիս ազատորեն վերելակ մտնել սայլակներով: Բրայլյան այբուբենով թվատախտակն ու ձայնային ազդանշանն էլ տեսողության խնդրով քաղաքացիների համար են: «Վերելակներն ունեն նաեւ նոր UPS համակարգեր, որոնք հոսանքազրկման դեպքում կարող են մեկ հարկ բարձրացնել կամ իջեցնել վերելակն ու բացել դռները: Որեւէ քաղաքացի խցիկում չի մնա»,- նշում է վերելակների ներկրմամբ եւ տեղադրմամբ զբաղվող Լեւոն Ավետյանը: Նոր վերելակները նաեւ մոտ 50 տոկոսով նվազեցնում են էլեկտրաէներգիայի ծախսը:Վերելակը տեղադրելուց հետո կապալառու կազմակերպությունը 1 տարի պարտավոր է տեխնիկական սպասարկում իրականացնել, սակայն ընթացիկ սպասարկումը, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ իրականացվում է համատիրությունների վերելակային ծառայությունների միջոցով:

«Նոր տեղադրված վերելակները հաճախակի խափանվում են». երբեմն դժգոհում են քաղաքացիները: Քաղաքապետարանում նշում են, որ որոշ հասցեներում կարգավորման խնդիրներ իսկապես լինում են, որոնք արագորեն լուծվում են, բայց շատ դեպքերում բնակիչները հենց իրենք են վնասում սարքավորումը: «Ունենք նաեւ ավանդական դարձած մի խնդիր. բնակիչները երբեմն աստիճանավանդակները մաքրում են, աղբը նետում են վերելակի հորան, դրանից հետո նաեւ ջրում են: Եթե այդ պահին վերելակը գտնվի իրենց հարկից ներքեւ, վստահաբար կարող եմ ասել, որ շատ կարճ ժամանակում այդ վերելակը շարքից դուրս կգա: Պետք է խնդրեմ, որ ավելի խնամքով վերաբերվեն, փորձարկումներ չանեն»,-նշում է Արսեն Կարոյանը: Տարեկան ծրագրի իրագործումից հետո քաղաքում դեռեւս փոխարինման ենթակա կլինի 3200 վերելակ: Համայնքը նախատեսում է ծրագիրը շարունակել նաեւ հաջորդ տարի ավելի մեծ ծավալներով, թեեւ, ըստ օրենքի, վերելակների շահագործումը, նաեւ փոխարինումը բնակչի խնդիրն է՝ որպես բաժնային ընդհանուր սեփականություն:

«2023-ի համար արդեն իսկ հավաքվել եւ ամփոփվել են տվյալները, որպեսզի եւս 700 վերելակ փոխարինենք: Սա վերելակային տնտեսության մեծ թարմացման վկայությունն է»,-նշում է կոմունալ տնտեսության վարչության պետը: Վերելակների փոխարինման ծրագիրը Երեւանում միանգամից մի քանի խնդիր է լուծում՝ բնակիչների անվտանգություն, հարմարավետություն եւ սոցիալական բեռի թեթեւացում:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՆՈՐ ԲԻԶՆԵՍ

ԱՐՓԻՆ՝ «ՄԱԽՄՈՒՐ» ՊԱՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երգչուհի Արփին այս օրերին գտնվում է ԱՄՆ-ի Լոս-Անջելես քաղաքում: Երգչուհին, բացի ստեղծագործական գործունեությունից, շուրջ մեկ տարի է հիմնել է իր սեփական պայուսակների բրենդը, որն անվանել է « Մախմուր »:

Ի դեպ, նշենք՝ ավելի վաղ Արփին ArmLur.am-ի հետ զրույցում հայտնել էր նոր գործունեության եւ բիզնես լեդի լինելու մասին:

Նշենք, որ Արփին իր ինստագրամյան էջում ակտիվորեն հետեւորդների հետ կիսվում է «Մախմուր» պայուսակների բրենդով. «Երեկ Լոս Անջելեսում առաջին անգամ ներկայացրեցինք «Մախմուր»-ը: Մի կողմից անսպասելի էր նման արձագանք եւ հիացմունք, մյուս կողմից՝ սպասելի, քանի որ մեկ տարվա ընթացքում ջանք չենք խնայել կատարելագործել մեր աշխատանքը, ընդառաջ գնալ մեր հաճախորդների առաջարկներին, ներկայացնել նոր մոդելներ եւ հավաքածուներ: «Մախմուր»-ը շատ սիրվեց Լոս Անջելեսում: Շնորհակալ ենք կազմակերպիչներին, բոլոր ներկա գտնվողներին, հայկական արտադրանքը գնահատողներին»:

Իսկ ավելի վաղ Արփին «Մախմուր» բրենդի մեկամյակի առթիվ գրել էր. «Այս մեկ տարվա ընթացքում մենք հասցրել ենք կատարել ահռելի աշխատանք՝ մեր արտադրանքը բարելավելու եւ հայկական շուկայում վստահելի անուն ձեւավորելու ուղղությամբ:

«Մախմուր»-ը դարձել է սիրելի եւ ցանկալի անուն, «Մախմուր» պայուսակները կրում են տարբեր տարիքի, ոճերի ու ապրելակերպի տեր կանայք թե՛ առօրյայում եւ թե՛ հատուկ առիթների ժամանակ:

Այնքան ասելիք ունենք, որ չի տեղավորվի այս պոստում: 1 տարվա ընթացքում «Մախմուր»-ի ձեռքբերումները ամփոփենք մի քանի կետերով՝

1. ստեղծել ենք 30-ից ավել պայուսակի մոդելներ, ներկայացրել ենք 6 հավաքածու,
2. ձեւավորել ենք պրոֆեսիոնալ արտադրական թիմ եւ ներդրել ենք արդյունավետ արտադրական գործընթացներ,
3. ձեռք ենք բերել ճանաչելի անուն հայկական շուկայում,
4. գործարկել ենք makhmur.com կայքը, որը դեռ բարելավվում է եւ զինվում է ավելի օգտակար գործիքներով,
5. մասնակցել ենք մի շարք ցուցահանդես-վաճառքների,
6. փորձարկել ենք տարբեր հումք եւ արդյունքում ընտրել լավագույն որակ ապահովող ապրանքներն ու մատակարարներին,
7. «Մախմուր»-ի բազմաթիվ հաճախորդների աշխարհագրությունը չի սահմանափակվում միայն Հայաստանով: Մենք ձեռք ենք բերել հավատարիմ հաճախորդներ ոչ միայն Հայաստանից, այլեւ ԱՄՆ-ից, Կանադայից, Գերմանիայից, Ռուսաստանից եւ այլ երկրներից,
8. «Մախմուր» պայուսակները ներկայացվել են 5 Concept խանութ-սրահում,
9. այժմ մասնակցում ենք AGBU-ի կողմից կազմակերպված «Կին ձեռներեցներ» ծրագրին, որտեղ բարելավում ենք գիտելիքները բիզնեսի, արտադրության վերաբերյալ, ձեռք ենք բերում նոր ծանոթություններ եւ ընդլայնում մեր համայնքը,
10. մոտ ապագայում եւս ունենք անելիքներ եւ սպասված անակնկալներ»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՄՐՑՈՒԹՅԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՒՄ

Կինոռեժիսոր Արման Չիլինգարյանի «Լույսի կաթիլներ» լիամետրաժ խաղարկային ֆիլմը ցուցադրվելու է Ֆլորենցիայի միջազգային երկրորդ կինոփառատոնի (Florence International Film Festival) մրցութային ծրագրում:

Հայաստանի ազգային կինոկենտրոնից հայտնում են, որ փառատոնը տեղի կունենա Իտալիայի Ֆլորենցիա քաղաքում նոյեմբեր ամսին:

Ֆիլմը, որը նկարահանվել է պետական ֆինանսական աջակցությամբ, պատմում է 1990-ականների Հայաստանի մասին: Ֆիլմում զինվորական կալանքից ազատվելուց հետո Արսենը վերադառնում է տուն: Ծնողները ավտովթարից զոհվել էին, երբ նա կալանքում էր: Բանակային անցյալը եւ իր հետ այնտեղ տեղի ունեցածն ազդեցություն են թողել Արսենի վրա: Լուռ վերապրելով անցյալը՝ փորձում է համակերպվել քաղաքացիական կյանքին: Նրան փորձում է օգնել բանակային հրամանատարը, որը դարձել է հոգեւորական: … Եւ այդ խավարի մեջ Արսենը հանդիպում է Մարիին:

Կինոնկարի համասցենարիստներն են Արման Չիլինգարյանը եւ Գարիկ Մաշկարյանը, օպերատորը Արտո Խաչատրյանն է, նկարիչը Ներսես Սեդրակյանն է, կոմպոզիտորը՝ Լեւոն Թեւանյանը, հնչյունային ռեժիսորը՝ Տիգրան Կուզիկյանը: Այս ֆիլմում իր վերջին դերն է խաղացել սիրված դերասան Վիգեն Ստեփանյանը:

ԼՈՒՐՋ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Դերասանուհի Եկատերինա Սեմենովան ռուսական НТВ հեռուստաալիքի Звезды сошлись հաղորդման ժամանակ խոսել է որոշ ժամանակ առաջ արված աղիների լուրջ վիրահատության մասին:

Սկզբում բժիշկները որոշել են, որ կինը բաց խոց ունի, որն արտահոսում է դեպի որովայնի խոռոչ, սակայն վիրահատությունից հետո պարզվել է, որ խոց չկա:

«Ասացին. «Մինչեւ չասեք, թե ինչ է պատահել, մենք այստեղից չենք գնա: Դուք խոցի որեւէ վնասվածք չունեք. մենք բացել ենք աղիքները, եւ դրանք բացարձակապես վնասված չեն, սակայն աղիքներից դուրս աղիքանյութ կա»»,- դերասանուհին մեջբերել է կնոջ խոսքերը:

Հետո դերասանուհին հիշել է, որ ձկան սենդվիչներ է կերել եւ ոսկորը մնացել է կոկորդում, նա հազացել է եւ մոռացել այդ մասին: Բժիշկները ենթադրել են, որ ոսկորը կարող է կտրած լինել աղիքները, ինչի հետեւանքով էլ հեղուկը դուրս է թափվել, եւ բորբոքում է սկսվել:

ԼՈՒՐԵՐ

ՑԱՎԱԼԻ ԼՈՒՐ

Ամերիկացի դերասան Լեսլի Ջորդանը, ով հայտնի է American Horror Story եւ Will & Grace հեռուստասերիալներում իր մասնակցությամբ, ավտովթարից մահացել է: Դերասանը 67 տարեկան էր: Իրավապահ մարմինների աղբյուրի հայտնած տեղեկությունների համաձայն՝ վթարը տեղի է ունեցել Հոլիվուդի տարածքում սեպտեմբերի 24-ի առավոտյան: Ենթադրվում է, որ Ջորդանը մեքենա վարելիս իրեն վատ է զգացել, ինչի հետեւանքով մեքենան բախվել է շենքի պատին: Հոկտեմբերի 18-ին հայտնի էր դարձել, որ մահացել է դերասան ու կասկադյոր Թեդ Ուայթը, որը «Ուրբաթ 13. վերջին գլուխը» ֆիլմում մարմնավորել է մարդասպան Ջեյսոն Վուրհիսին: Արտիստը մահացել է տանը քնած ժամանակ. նա 96 տարեկան էր:

«ՀՈՒՅՍ ՈՒՆԵՄ»

Անգլիայի չեմպիոն «Մանչեսթեր Սիթիի» կատալոնացի գլխավոր մարզիչ Խոսեպ Գվարդիոլան խոսել է իր ղեկավարած թիմի խաղացողների վրա աշխարհի առաջնության հնարավոր ազդեցության եւ նորվեգացի հարձակվող Էրլինգ Հոլանդի հանգստի մասին: Նորվեգիայի հավաքականը չի նվաճել աշխարհի առաջնության ուղեգիր: «Առաջին անգամ է մեր կյանքում լինելու այսպիսի մրցաշրջան, եւ մենք չգիտենք, թե ինչ վիճակում կվերադառնան խաղացողներն աշխարհի առաջնությունից: Եթե դառնան չեմպիոն, կլինեն շատ երջանիկ, բայց նաեւ շատ հյուծված: Ոմանք կարող են շուտ ավարտել առաջնությունը եւ մեկնել արձակուրդ: Շատ խաղացողներ էլ բաց կթողնեն աշխարհի առաջնությունը ծանրաբեռնվածության, վնասվածքների հետեւանքով: Հոլանդն արձակուրդը կանցկացնի Նորվեգիայում եւ Իսպանիայում: Նա տուն ունի Մարբելյայում, որտեղ գոլֆ կխաղա: Հույս ունեմ, որ նա շատ չի խմի եւ լավ մարզավիճակում կվերադառնա»,- ասել է Գվարդիոլան:

Աշխարհի առաջնությունը Քաթարում կմեկնարկի նոյեմբերի 20-ին եւ կավարտվի դեկտեմբերի 18-ին:

ԾՐԴՋԱՆՑԵԼ Է ՕՐԵՆՔԸ

Ուկրաինացի երգիչ Վերկա Սերդյուչկան Լվովում կայացած համերգի ժամանակ ռուսերեն մի քանի երգ է երգել:

Ըստ հրապարակման՝ հանդիսատեսից մի մարդ հոլովակ է նկարել, որում Սերդյուչկան (իսկական անունը՝ Անդրեյ Դանիլկո) կատարում է Я не поняла երգը:

Լվովի մարզում 2018 թվականից արգելվել է ռուսալեզու երգերի կատարումն ու ռուսալեզու բովանդակության տարածումը: Իրավապահ մարմիններն այս տարվա սկզբին ռեյդ են իրականացրել, որի ընթացքում օրինախախտները տուգանվել են:

Ավելի վաղ Անդրեյ Դանիլկոն ասել էր, որ Ալլա Պուգաչովային միշտ «արդար մարդ» է համարել՝ մեկնաբանելով իրեն օտարերկրյա գործակալ ճանաչելու մասին Պրիմա Դոննայի խնդրանքը, ինչը պայմանավորված էր ամուսնուն՝ Մաքսիմ Գալկինին նման ցուցակում ընդգրկելով:

● *Հոկտեմբերի 26-ին Սոս Սարգսյանի անվան Համազգային թատրոնում տեղի կունենա «Երեք գույն. ծիրանագույն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ստանալ ջրօգտագործման թույլտվության հայտը:

Միքայել Վարդանյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջրօգտագործման թույլտվությունը տրվում է դիմողի հայտի հիման վրա: Հայտը կարող է մերժվել, եթե դրանով պահանջվող ջրօգտագործումը չի համապատասխանում՝

1) սույն օրենսգրքին, ջրի ազգային քաղաքականությանը, ջրի ազգային ծրագրին, ջրավազանային կառավարման պլաններին եւ դրանց առնչվող իրավական այլ ակտերին,

2) ջրի ազգային պաշարի պահպանման պահանջներին, ջրերի ստանդարտներին, այդ թվում՝ ջրի որակի նորմերին:

Եթե ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվում է սերվիտուտ կամ այլ անձանց սեփականությունից (ջրընդունիչ, կառուցվածք եւ այլն) օգտվելու անհրաժեշտություն, ապա այդ մասին պետք է նշվի հայտի մեջ: Նման դեպքերում Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմինը ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար դիմողից կարող է պահանջել հնարավոր սերվիտուտների եւ համապատասխան գույքից օգտվելու նկարագրությունը, սեփականատիրոջ (սեփականատերերի) անունը եւ գտնվելու վայրը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Եթե ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար դիմողն ունի կամ մտադիր է ՀՏԿ կառուցել, ապա այդ մասին նա նշում է իր հայտի մեջ եւ Ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանության մարմին է ներկայացնում համապատասխան տեղեկատվություն, իսկ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար՝ անհրաժեշտության դեպքում նաեւ գետահատվածում սողանքային տարածքի առկայության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական լիազոր մարմնից տեղեկատվություն:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս եւ ի՞նչ պայմաններով են կատարվում ամուսնական պայմանագրի փոփոխությունը եւ լուծումը:

Իրինա Սիմոնյան (26 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնական պայմանագիրն ամուսինների համաձայնությամբ կարող է փոփոխվել կամ լուծվել ցանկացած ժամանակ: Ամուսնական պայմանագիրը փոփոխվում եւ լուծվում է ամուսնական պայմանագիր կնքելու համար սահմանված կարգով: Ամուսնական պայմանագրի կատարումից միակողմանի հրաժարում չի թույլատրվում: Ամուսիններից մեկի պահանջով ամուսնական պայմանագիրը կարող է փոփոխվել կամ լուծվել դատական կարգով՝ պայմանագրերի փոփոխման եւ լուծման համար քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված հիմքերով ու կարգով:

ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնական պայմանագրի գործողությունը դադարում է ամուսնության դադարման պահից, բացառությամբ այն պարտավորությունների, որոնք ամուսնական պայմանագրով նախատեսված են ամուսնությունը դադարելուց հետո ընկած ժամանակաշրջանի համար:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Թուրքիայում

Հայաստանի հաշմանդամային սպորտի ֆեդերացիայի հավաքականը Թուրքիայում նվաճել է 8 մեդալ: Աշխարհի չեմպիոնի կոչմանն արժանացել են Նաիրա Մեսրոպյանը եւ Մարինե Մկրտչյանը՝ երկուական ոսկե մեդալ նվաճելով ձախ եւ աջ ձեռքերով: Պատվո հարթակի երրորդ աստիճանին էլ կանգնել են Շահեն Բաբայանը, Սարգիս Հարությունյանը եւ Ալեքսանդր Մովսիսյանը: Վերջինս երկու ձեռքով էլ բրոնզե մեդալ է նվաճել:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **25.10.2022**
Հասցեն՝ Գերպրոնիրքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: